ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 փետրվարի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

24
(2690)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 163



2020 թվականի մայիսի 22-ին՝ պատերազմից 4 ամիս առաջ, Նիկոլ Փաշինյանն Արցախի նախագահի երդմնակալության արարողությանը Շուշիում հայտարարում էր. «Թավշյա հեղափոխությունն անխուսափելիորեն պիտի՛ բերի Արցախի ինքնորոշման միջազգային ճանաչմանը»: Արդեն անցել է երկու տարի, եւ հեղափոխությունը ոչ միայն չի բերել Արցախի ինքնորոշման միջազգային ճանաչում, այլ, սխալված չենք լինի, եթե ասենք, Արցախը մոռացության է մատնվել իշխանությունների կողմից եւ շրջափակված է մնում դեկտեմբերի 12-ից: Այսօր ունենք մի իրավիճակ, երբ Հայաստանից Արցախ մտնող միակ գազատար խողովակի աշխատանքն արգելափակված է: Գազամատակարարման եւ էներգամատակարարման խափանումների պատճառով Արցախի ջերմոցներում ցրտահարվում է չհասունացած բերքը: Այլ տվյալներ եւս. 4 երեխա գտնվում է մանկական հիվանդանոցի նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքներում, 12 չափահաս բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 4-ը ծայրահեղ ծանր վիճակում է: Արդեն 249 երեխա ծնվել է շրջափակման մեջ: Արցախի բոլոր բուժհաստատություններում պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով մոտ 640 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից: Մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել 97 հիվանդ համապատասխան բուժում ստանալու համար: Ստեղծված տնտեսական բարդ իրավիճակի պատճառով նախնականորեն առնվազն 5,100 մարդ կորցրել է աշխատանքը եւ եկամտի աղբյուրը: Այս ամենը նշանակում է, որ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ արել է հայտարարություններ, որոնք իրականություն չեն դարձել՝ այդպիսով մոլորեցնելով հանրությանը եւ խաբելով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանը հրաժարվել է առաջադրվել Սիսիանի համայնքապետի պաշտոնում: Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, մարտի 26-ին ՏԻՄ ընտրություններ են լինելու Շիրակի մարզի Անի եւ Սյունիքի Սիսիան խոշորացած համայնքներում: «Հայաստան» դաշինքը մտադիր էր Սիսիանում առաջադրել իր թեկնածուին՝ ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանին, որը նաեւ նախկինում ղեկավարել է Սիսիան համայնքը եւ հարազատ է սիսիանցիների համար: Երկար քննարկումներից հետո թիմակիցներին, սակայն, չի հաջողվել համոզել Սարգսյանին առաջադրվել Սիսիանում: Տեղեկացանք, որ Արթուր Սարգսյանը, նախ, ժամանակ է ուզել թիմակիցներից որոշում կայացնելու համար, ապա վերջերս հայտնել է, որ չի ցանկանում առաջադրվել: Վերջինս թիմակիցներին ասել է, որ ցանկանում է մնալ օրենսդիրում եւ այնտեղ շարունակել իր գործունեությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեն ստացել է նաեւ Ազատ գյուղի կացարանում կենդանի մնացած երկու զինծառայողների մասով անցկացված թմրաբանական փորձաքննության եզրակացությունը: Ըստ այդ եզրակացության՝ թմրանյութի հետքեր չեն եղել զինվորի եւ զինծառայողի մարմիններում: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնապես դիմեց ՀՀ քննչական կոմիտե, որտեղից ի պատասխան հայտնեցին. «Երեք զինծառայողների մասով թմրաբանական փորձաքննության եզրակացությունները ստացվել են. նրանց օրգանիզմում թմրանյութի հետքեր չեն հայտնաբերվել»: Նշենք, որ թմրաբանական փորձաքննության էր ենթարկվել Ազատ գյուղի կացարաններից մեկի հրդեհի հետեւանքով 15 զինծառայողների մահվան գործով անցնող սպան՝ Եղիշե Հակոբյանը, եւ մի զինվոր:



Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մերի Գալստյանի կողմից ներկայացված՝ «Էկոլոգիական տեղեկատվության մասին» նախագծերի փաթեթը քննադատության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծության վարչության կողմից: Նախ՝ նշենք, որ այս նախագծերի փաթեթով պատգամավորն առաջարկում էր սահմանել «էկոլոգիական տեղեկատվություն» հասկացությունը, էկոլոգիական տեղեկատվության չափորոշիչների հասկացություններն ու ցանկը: Ընդհանուր առմամբ, փորձաքննության արդյունքում վրիպակներ են արձանագրվել, որոնք խոսում են պատգամավորի ներկայացրած աշխատանքի փնթի լինելու մասին: Օրինակ՝ եղել են էջեր, որոնք համարակալված են, եղել են էջեր, որոնք համարակալված չեն եղել, եւ առաջարկվում է նախագծում մեկ մասից բաղկացած հոդվածների համարակալման նկատմամբ դրսեւորել միասնական մոտեցում: Միեւնույն ժամանակ, նախագծի 1-ին գլխի համարը տեքստից առանձնացված չէ որեւէ կետադրական նշանով, նախագծի մյուս գլուխների համարները գլուխների տեքստից բաժանված են միջակետերով: Այստեղ եւս առաջարկվել է ապահովել Նախագծի գլուխների համարակալման միասնական մոտեցում: Փորձաքննության մեջ նշվում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ օրենքը պետք է ձեւակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետեւանքները: Ելնելով այս դիտարկումներից՝ նաեւ անհրաժեշտ են համարում կատարել խմբագրական փոփոխություններ: Այլ խնդիրներ եւս արձանագրվել են, ընդհանուր առմամբ՝ 19 էջ: Եկել են այն եզրահանգման, որ նախագծերի փաթեթով նախատեսված կարգավորումները կարող են խնդրահարույց լինել իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Հիշեցնենք նաեւ, որ Մերի Գալստյանը վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի «Էրատո» ջոկատի անդամ էր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒՐՔԻԱՆ Է ՓԱԿԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼԱՉԻՆԸ ԲԱՑԵԼՈՒ ՌԵՍՈՒՐՍ ՉՈՒՆԻ

Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը փետրվարի 15-ին մեկնել էր Թուրքիա: Պատվիրակության կազմում էր նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման բանակցություններում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը:

Անկարակում տեղի է ունեցել նաեւ Հայաստանի եւ Թուրքիայի արտգործնախարարների համատեղ ասուլիսը:

Արարատ Միրզոյանը վերահաստատել է Թուրքիայի հետ հարաբերությունների ամբողջական կարգավորման, դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանի ամբողջական բացման հարցում Հայաստանի պատրաստակամությունն ու ձգտումը, կողմերը պայմանավորվել են նաեւ համատեղ ջանքերով վերանորոգել Անիի կամուրջը:

Հայաստանի իշխանությունները պարբերաբար համոզմունք են հայտնում, որ իրենց այս քայլը դրական ազդեցություն է ունենալու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է քաղաքագետ Ալեքսանդր Մարկարովի հետ:

-Պարոն Մարկարով, Դուք ինչ եք կարծում, հայ-թուրքական հարաբերություններում ինչ զարգացումներ կլինեն առաջիկայում:

-Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը ժառանգություն ստացած խնդիր է այս իշխանության համար: Այս ուղղությամբ տարվող դիվանագիտությունը, որը սկսվել էր՝ որպես ֆուտբոլային դիվանագիտություն, հիմա շարունակվում է՝ որպես հումանիտար դիվանագիտություն: Խնդիրը կայանում է ոչ թե նրանում՝ արդյոք Հայաստանի իշխանությունների մոտ առկա է բավարար քաղաքական կամք՝ վերահաստատելու դիվանագիտական հարաբերությունները Թուրքիայի հետ եւ բացելու հայ-թուրքական սահմանը, այլ նրանում՝ արդյոք Թուրքիան պատրաստ է իրականացնելու քայլ՝ այս հարաբերությունների հաստատման եւ ստեղծման ուղղությամբ:

Թուրքական կողմը չի թաքցնում, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը պայմանավորում է ցեղասպանության ճանաչման հարցի, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման եւ Արցախի հարցի հետ:

Եթե մենք շաունակենք ենթադրել, որ հայ-թուրքական հարաբերությունները շարունակում են հանդես գալ որպես ածանցյալ հայ-ադրբեջանական հարաբերությունների, այս դեպքում հայ-թուրքական հարաբերությունները չկարգավորված են մնալու այնքան, քանի դեռ Արցախի եւ միջպետական մյուս խնդիրները կարգավորված չեն:

Բանակցությունները կարող են շարունակվել, պարբերաբար ձեռքբերումներ ներկայացվեն, բայց երկկողմանի հարաբերությունների հաստատման համար մենք դեռ չենք տեսնում զգալի եւ էական առաջընթաց, որը պայմանավորված է նրանով, որ Թուրքիան կապում է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը բացառապես հայ-ադրբեջանական հարաբերություններով եւ Արցախի հարցով:

-Պարոն Մարկարով, մեր հանրությունը, ինչպես նաեւ ընդդիմադիրները մեղադրանք են հնչեցնում իշխանությունների հասցեին, ասում են՝ ինչպես ստացվեց արդյոք, որ Թուրքիա օգնություն հասցնելու համար մեկ օրվա ընթացքում հնարավոր եղավ ճանապարհը բացել, իսկ Լաչինի ապաշրջափակման ուղղությամբ քայլեր չեն արվում: Դուք ի՞նչ կասեք այս մասին:

-Հայ-թուրքական սահմանը Հայաստանը չի փակել, Թուրքիան է փակել. երբ կարիք եղավ բացել ճանապարհը, անմիջապես իրականացրեցին համապատասխան գործողություններ, որպեսզի մարդասիրական օգնությունը հասնի Թուրքիա: Ցավոք, Հայաստանը Լաչինի միջանցքը բացելու ռեսուրս չունի այն առումով, որ չունի ռեսուրս՝ ադրբեջանական կողմի վրա ազդելու կամ նպաստելու, որ խաղաղապահների բանակցությունները ադրբեջանական կողմի հետ արագ ավարտվեն այն արդյունքով, որը մենք ենք ցանկանում: Մենք գիտակցում ենք, որ շատ անգամ փակ ճանապարհները բացվում են այն դերակատարի կողմից, որը փակել է ճանապարհը, կամ էլ համապատասխան աղբյուրների օգտագործմամբ, որը թույլ է տալիս իրականացնել ճնշում ճանապարհը փակողի վրա: Թուրքիայի դեպքում մենք տեսնում ենք, որ ով փակել է, նա էլ ճանապարհը բացել է, իսկ Լաչինի դեպքում մենք տեսնում ենք, որ փակողը ճանապարհը բացելու ցանկություն չունի, իսկ այլ կողմերը չունեն հնարավորություն՝ այն բացելու համար ճնշում գործադրելու: Այսինքն՝ հայ-թուրքական ճանապահը եւս չէր բացվի, եթե չլիներ Թուրքիայի ցանկությունը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԾԱՆՐ ՎԻՃԱԿ

ԱՐՑԱԽՈՒՄ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հայաստանում Լատվիայի Հանրապետության նորանշանակ դեսպան Ն.Գ. տկն Էդիտե Մեդնեի եւ պատվո հյուպատոս Արմեն Ղասաբօղլյանի հետ հանդիպման ժամանակ բարձրացրի Արցախի ժողովրդի ինքնորոշման հարցը:

1. Բարեկամական խմբի շրջանակներում հանդիպմանը խոսեցի Հայաստանի եւ Արցախի նկատմամբ ագրեսոր Ադրբեջանի կողմից եկող վտանգների մասին: Նշեցի, որ Արցախը Լատվիայի, Հայաստանի եւ մյուս երկրների պես իրավական ճանապարհով անկախացավ Խորհրդային Միությունից, սակայն Ադրբեջանը չի համակերպվում այդ մտքի հետ եւ այդ անկախությունը չի ներում մեզ:

2. Դեսպանին ներկայացրի Արցախի՝ հումանիտար աղետի հետեւանքով առաջացած ծանր վիճակը, սննդի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության պարագաների սղությունը եւ մի շարք այլ խնդիրներ:

3. Արձանագրեցի, որ Ադրբեջանը 2020 թ. պատերազմից հետո զինված ագրեսիա է գործել՝ 3 անգամ ներխուժելով Հայաստանի սուվերեն տարածք. դրա հետեւանքով կորցրել ենք մի շարք տարածքներ, ջրի ակունքներ եւ այլն:

4. Բարձրացրի Արցախի ժողովրդի ինքնորոշման հարցը: Ջուգահեռներ տանելով Կոսովոյի հետ՝ կիսվեցի այս հարցում Լատվիայից աջակցության ակնկալիքներիս մասին:

5. «Ազատությունը պետք է փայփայել: Իբրեւ երկիր՝ Լատվիան իսկապես նվաճել է իր ազատությունը ու հիմա փայփայում է այն: Մենք ձեզ նույնն ենք ցանկանում, քանի որ տեսնում ենք, որ դուք էլ եք նույն ճանապարհին, եւ դուք գնահատում եք ազատությունը»,- իր խոսքում ընդգծեց տիկին Մեդնեին:

Հանդիպման ավարտին իմ երախտիքի խոսքը հայտնեցի Լատվիային՝ հայ ժողովրդի կողքին լինելու համար. Ռիգայում բացվել է Ցեղասպանության թանգարան, ընդգծված բարեկամական վերաբերմունք կա հայերի նկատմամբ: Որպես ԵՄ անդամ երկիր՝ շնորհակալություն հայտնեցի նաեւ Հայաստան ԵՄ դիտորդական առաքելություն ուղարկելու համար»:

ԹԱՓՈՒՐ ԵՆ

Հայաստանի պետական գերատեսչություններում կան վարչություններ եւ բաժիններ, որոնք տեւական ժամանակ է՝ թափուր աշխատատեղեր ունեն: Որքան էլ իշխանությունները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, փորձում են գրավիչ դարձնել պետական ոլորտը, սակայն փաստ է, որ պետական գերատեսչությունների կայքերում չեն դադարում առկա թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները, քանի որ մարդիկ խուսափում են պետական աշխատանքի անցնել: Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը կանդրադառնա ՀՀ ֆինանսների նախարարությանը: Նախարար Վահե Հովհաննիսյանն արդեն հասցրել է կադրային փոփոխություններից հետո նոր նշանակումներ կատարել եւ ունի չորս տեղակալ, սակայն նախարարը չունի օգնական. համենայնդեպս, պաշտոնական կայքում առկա տվյալները այդ մասին են վկայում: Ի տարբերություն մյուս նախարարությունների՝ այստեղ իրավիճակը բարվոք է, եւ շատ թափուր հաստիքներ չկան: Վարչություններից թափուր է Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչությունը, Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը: Ընդ որում՝ վերջերս՝ փետվարի 10-ին հրապարակված տվյալների համաձայն՝ եղել են հաստիքների համալրման համար մրցույթներ, սակայն ոչ ոք չի դիմել: Օրինակ՝ դիմողներ չեն եղել Եվրասիական տնտեսական միության եւ Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժնի մասնագետի, Միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի մասնագետի եւ Սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության սոցիալական եւ առողջապահական ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի մասնագետի համար:

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ» ՉԻ ՀԱՅՏՆՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը հունվարի 12-ին անդրադարձել էր ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին պատկանող «Սիլ ինշուրանս» ապահովագրական ընկերությանը: Գրել էինք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն պահանջել է պատգամավորի ընտանիքին պատկանող ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում, սակայն, «Սիլ գրուպ» -ի մամուլի խոսնակ Աննա Մկրտչյանը նշել էր, որ «Սիլ ինշուրանս»-ը երբեւէ չի ներառվել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշենք, որ վերոնշյալի մասին փաստաթուղթը «Ժողովուրդ» օրաթերթը վերցրել է ՀՀ ֆինանսների նախարարության «Գնումների համակարգ» կայքէջից՝ հրապարակելով փաստաթուղթը: Այս մասին լուրը հրապարակելուց հետո «Սիլ ինշուրանս» ընկերությունը, դիմելով «Ժողովուրդ» օրաթերթին, տեղեկացրել է, որ դա եղել է ֆինանսների նախարարության գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թույլ տված վրիպակը, եւ համապատասխան կայքէջում արդեն շտկվել է սխալը: «Ժողովուրդ» օրաթերթը եւս մեկ անգամ անդրադառնում է այս թեմային՝ հղում անելով ֆինանսների նախարարության «Գնումների բողոքարկման համակարգ» կայքին, որովհետեւ այնտեղ ուղղվել է, եւ մենք էլ ուղղում ենք. «Սիլ ինշուրանս» ընկերությունը չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող ընկերությունների ցանկում: Նկատենք, որ թեեւ ֆինանսների նախարարության «Գնումների համակարգ» կայքէջում տեղադրված է շտկված տարբերակը, բայց դրա ներքեւում ակտիվ հղմամբ կա նաեւ հին՝ չուղղված տարբերակը: Ստացվում է, որ ֆինանսների նախարարությունը նախորդ՝ հին տարբերակները չի հեռացրել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ ԿԱ, ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՈՉ

Չնայած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկվանից Մյունխենում է եւ անգամ ոչ ֆորմալ հանդիպում է ունեցել Շառլ Միշելի հետ, սակայն նրա գլխավորած պատվիրակության այցի որոշումը ստորագրված եւ տեղադրված չէ:

Այս լուսանկարում երեւում է, որ երեկվա որոշումների մեջ պատվիրակություն Գերմանիա գործուղելու մասին որեւէ տվյալ չկա, հետեւաբար պաշտոնապես նաեւ հայտնի չէ, թե նա ում հետ է մեկնել Մյունխեն: Մինչ այս միայն հայտնի էր, որ նրան ուղեկցելու է նաեւ Աննա Հակոբյանն ու ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

ԳԵՏՆԱՆՑՈՒՄԸ ԹԵՔԱՀԱՐԹԱԿ ՉՈՒՆԻ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Երեկ Երեւանի կենտրոնում մեծ շուքով բացված Փակ շուկայի գետնանցումը չունի թեքահարթակ: Փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը 4 հոգով կարմիր ժապավենը կտրելուց հետո ավետեց. «Փակ շուկայի գետնանցումը մի փոքր ուշացումով, բայց հիմնովին վերանորոգված հանձնեցինք շահագործման եւ երեւանցիների գնահատականին»:

Նորոգման արդյունքում ոչ միայն օրինազանցություն է գրանցվել, այլեւ մարդու իրավունքների ակնհայտ խախտում. ինչպե՞ս պետք է սահմանափակ կարողություններով մարդիկ, մանկասայլակով անցորդները օգտվեն գետնանցումից...

Այնպես որ, գնահատականը՝ անբավարար, այս ստուգարքն էլ չհանձնեցիք, Տիգրան Ավինյան»:

ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՆ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՔՆՆԱԴԱՏԵԼ ԵՆ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մերի Գալստյանի կողմից ներկայացված՝ էկոլոգիական տեղեկատվության մասին նախագծերի փաթեթը քննադատության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծության վարչության կողմից: Նախ նշենք, որ այս նախագծերի փաթեթով պատգամավորն առաջարկում էր սահմանել «էկոլոգիական տեղեկատվություն» հասկացությունը, էկոլոգիական տեղեկատվության չափորոշիչների հասկացություններն ու ցանկը: Պատգամավորը նաեւ հիմնավորել է, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում այն էականորեն կնպաստի հասարակության տեղեկացվածության, իրազեկման մակարդակի բարձրացմանը, ինչն իր հերթին կարեւոր քայլ է հասարակության իրավագիտակցության բարձրացման համար, կապահովվի որոշումների կայացմանը հասարակության մասնակցության առավել գիտակից եւ կայուն հարթակ, կընդգծվի էկոլոգիական տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման համատեքստում պաշտոնական կայքերի, համացանցի, զանգվածային լրատվության եւ այլ նորարարական միջոցների օգտագործման կարեւորությունը, կներդրվեն էկոլոգիական տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման առավել գործուն մեխանիզմներ:

Եվ, ահա, այս նախագծերի փաթեթը ներկայացվել է փորձաքննության Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծության վարչության կողմից: Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության. նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշվում է, որ «Էկոլոգիական տեղեկատվության մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում, 13-րդ հոդվածի 1-ին մասում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի, Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ էկոլոգիական փորձաքննության մասին» օրենքի կրճատ անվանումների հիշատակումներն առաջարկել են համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին, այն է՝ «Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը»՝ հանելով օրենքների վերնագրերից հետո հիշատակված «Հայաստանի Հանրապետության» բառերը: Ընդհանուր առմամբ, փորձաքննության արդյունքում վրիպակներ են արձանագրվել, որոնք խոսում են պատգամավորի ներկայացրած աշխատանքի փութի լինելու մասին: Եղել են էջեր, որոնք համարակալված են, եղել են էջեր, որոնք՝ ոչ, եւ առաջարկվում է նախագծում մեկ մասից բաղկացած հոդվածների համարակալման նկատմամբ դրսեւորել միասնական մոտեցում: Միեւնույն ժամանակ, նախագծի 1-ին գլխի համարը տեքստից առանձնացված չէ որեւէ կետադրական նշանով, նախագծի մյուս գլուխների համարները գլուխների տեքստից բաժանված են միջակետերով: Այստեղ եւս առաջարկվել է ապահովել Նախագծի գլուխների համարակալման միասնական մոտեցում:

Փորձագետները նկատել են, որ «էկոլոգիական տեղեկատվության կառավարում» հասկացությունը նախագծում այլեւս չի կիրառվում, միաժամանակ հասկացության սահմանումը եւ կիրառությունը բացակայում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքից: Քննարկվող կարգավորումից բխում է, որ էկոլոգիական տեղեկատվության պահպանման եւ համակարգման վրա տարածվում են Նախագծով նախատեսված կարգավորումները, սակայն հարկ է նկատել, որ այդ իրավահարաբերությունների վերաբերյալ ամբողջական եւ որոշակի կարգավորումներ նախագծով չեն նախատեսվում: Փորձաքննության մեջ նշվում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ օրենքը պետք է ձեւակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իր վարքագծի իրավական հետեւանքները: Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են հասանելիությունը եւ կանխատեսելիությունը: Բացի այդ, օրենքը պետք է ձեւակերպվի այնպես, որ մասնավոր անձինք օժտված լինեն հանրային իշխանության կամայական միջամտությունների դեմ արդյունավետ պաշտպանության հնարավորությամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածով նախատեսվում է, որ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: Եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը: Եվ ելնելով այս դիտարկումներից, նաեւ անհրաժեշտ են համարում կատարել խմբագրական փոփոխություններ:

Նրանք նկատել են, որ քննարկվող իրավակարգավորումից հնարավոր չէ միանշանակ կերպով հստակեցնել, թե որ դեպքերում է էկոլոգիական տեղեկատվություն տնօրինողը համարվում զարգացման եւ նորարարական ընդհանուր միտումներին հետեւելու եւ դրանք առավելագույնս կիրառելու իր պարտականություն կատարած, ինչը հնարավորություն կտար նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց որոշակիացնելու՝ արդյոք իրենց կողմից ստացված էկոլոգիական տեղեկատվությունը բավարարում է օրենքով սահմանված պահանջներին: Այլ խնդիրներ եւս արձանագրվել է, ընդհանուր առմամբ՝ 19 էջ: Եկել են այն եզրահանգման, որ նախագծերի փաթեթով նախատեսված կարգավորումները կարող են խնդրահարույց լինել իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵԽԽՎ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փաստահավաք առաքելությամբ Հայաստան է ժամանել ԵԽԽՎ պատվիրակությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմո Կիլյունենը, Բորիանա Աբերգը եւ հանձնաժողովի քարտուղար Մեթյու Մոնինը:

Պատվիրակությանը կընդունի Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը:

Պատվիրակությունը Հայաստան է ժամանել երեկ՝ փետրվարի 17-ին, եւ այստեղ կլինեն մինչեւ փետրվարի 20-ը:

ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ ՎԻԵՆՆԱ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ՝ փետրվարի 22-25-ը ԱԺ պատվիրակություն կգործուղվի Վիեննա՝ մասնակցելու Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ) ձմեռային նստաշրջանի աշխատանքներին եւ երիտասարդ պատգամավորների ցանցի աշխատանքային նիստին: Պատվիրակության կազմում են ԵԱՀԿ ԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Մարիա Կարապետյանը, Լիլիթ Մինասյանը, Արթուր Հովհաննիսյանը եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվի ՀՀ պետբյուջեի հաշվին:

ՈՎ Է ՆԱ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՀԱՐՎԱԾԵԼ Է ԼՐԱԳՐՈՂԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Արտակ Պողոսյանը նշանակվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ: Նշենք, որ նախկինում Արտակ Պողոսյանը զբաղեցնում էր Երեւանի ոստիկանապետի պաշտոնը, սակայն Վալերի Օսիպյանը նրան հեռացրեց աշխատանքից:

Ինչո՞վ է հայտնի դարձել հանրությանը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի նոր տեղակալը. ինչպես իր ղեկավարը, նա եւս լրագրողների դեմ գործողություններով է աչքի ընկել: 2014թ. փետրվարի 12-ին Մաշտոցի պողոտայում ՀԱԿ ակտիվիստները Մարտի 1-ի հանրահավաքի մասին իրազեկման ակցիա են իրականացրել: Իրազեկման աշխատանքներին խոչընդոտել էին: Դեպքից հետո ոստիկանները ոչ թե խոչընդոտողներին, այլ ակտիվիստներին բերման էին ենթարկել, իսկ լրագրողների ձեռքից վերցրել էին տեսախցիկները: Բերման ենթարկվածների թվում են եղել «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի լրագրող Անի Գեւորգյանը եւ ilur.az կայքի օպերատոր Սարգիս Գեւորգյանը: Ինչպես հայտարարել էր լրագրող Անի Գեւորգյանը, ոստիկանության բաժնում ոստիկանության այն ժամանակվա Կենտրոնի բաժնի պետ Արտակ Պողոսյանը ձեռքով հարվածել էր իր դեմքին:

Անի Գեւորգյանի հաղորդման հիման վրա՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնատար անձը, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը) եւ 309-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնեական լիազորություններն անցնելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով) հատկանիշներով:

Դեպքից ամիսներ անց ՀՔԾ-ն կարճել էր քրեական գործով վարույթը՝ «հանցագործության հատկանիշների բացակայության» հիմքով: Անին պատմել էր, որ քրեական գործը կարճել են այն պատճառաբանությամբ, թե, իբր, ոստիկաններն իր նկատմամբ բռնություն էին գործադրում իր իսկ անվտանգության համար:

Դեպքին հաջորդող օրերին ոստիկանությունում նշանակվել էր ծառայողական քննություն, սակայն քննությունը կասեցված էր, քանի որ ՀՔԾ-ում հարուցվել էր քրեական գործ: Դեպքից 1 տարի 5 ամիս անց քրեական գործը կարճելիս ոստիկանությունը համարել էր, որ խախտումներ չեն եղել: Անցնելով ներպետական բոլոր ատյաններով՝ լրագրող Անի Գեւորգյանը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՐՈՒՑՎԵԼ Է

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դատախազը, ուսումնասիրելով Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 5-րդ կայազորային քննչական բաժնում քննվող քրեական վարույթի նյութերը, 2023 թվականի փետրվարի 16-ին, իր նախաձեռնությամբ, ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներական ծառայության պետ Տ.Ղ.-ի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով (զինվորական պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):

Զորամասի ինժեներական ծառայության պետ Տ.Ղ.-ն, պատասխանատու լինելով իրեն վստահված ստորաբաժանման նյութական ապահովման համար, պարտավոր լինելով հասնել սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով եւ նյութական այլ միջոցներով լրիվ ապահովության, մշտապես ճշգրիտ տեղեկություններ ունենալ իրեն վստահված ստորաբաժանման սպառազինության, ռազմական տեխնիկայի եւ նյութական այլ միջոցների առկայության մասին, պարտավոր լինելով ժամանակին պահանջել եւ կազմակերպել նյութական միջոցների ստացումը եւ ենթականերին հանձնումը, իրեն ենթակա ստորաբաժանումում ՀՀ N զորամասի ինժեներական ծառայության ինժեներասակրավորային վաշտում հսկողություն իրականացնել հակահրդեհային պահանջների կատարման նկատմամբ, պատասխանատու լինելով իրեն ենթակա ստորաբաժանումում հրդեհային անվտանգության պահանջների կատարման համար, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով հիշյալ պարտականությունները չի կատարել, այդ թվում՝ նաեւ հակահրդեհային պաշտպանության համապատասխան միջոցներով ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտն ապահովելու ուղղությամբ, ինչի հետեւանքով անզգուշությամբ առաջացրել է մարդու (մարդկանց) մահ:

Մասնավորապես, 2023 թվականի հունվարի 19-ին՝ կեսգիշերն անց, ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներական ծառայության պան, հանդիսանալով նստեցման շրջանի պատասխանատու, սահմանված կարգի խախտմամբ, Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի 1-ին փողոցի 20-րդ տուն հասցեում տեղակայված վերոնշյալ ստորաբաժանման անձնակազմի համար նախատեսված կացարանում վառարանը վառել է ավտոբենզինով: Կացարանում բռնկվել է հրդեհ: Հակահրդեհային պաշտպանության համապատասխան միջոցների բացակայության պատճառով կացարանում գտնվող զինծառայողների կողմից ոչ միայն հնարավոր չի եղել այն մարել, այլ նաեւ պահեստային ելքի բացակայության պայմաններում կոտրել կացարանի պատուհաններին ամրացված երկաթյա ճաղավանդակները եւ դուրս գալ այնտեղից: Դրա հետեւանքով կացարանում հանգստի մեջ գտնվող, նույն վաշտի 15 պարտադիր ժամկետային զինծառայողներ մահացել են, իսկ սպան եւ չորս պարտադիր ժամկետային զինծառայողներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏԵԼ Է

Իրավապահ համակարգը շարունակում է բացահայտումները, թե ինչ պայմաններում է հակառակորդը մտել ՀՀ սահման: Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Հովիկ Ծատուրյանին, Վարազդատ Մադինյանին, Արտյոմ Գառնիկի Դարբինյանին, Վաչիկ Մկրտչյանին, Աղասի Ավետիսյանին, Արման Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, լինելով ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում, խմբով իրենց ամրակցված զենքերով թողել են պահպանվող տարածքը, մարտական դիրքը, հենակետը եւ ծառայության վայրը, նախնական հանցավոր համաձայնության գալով, առանց անմիջական մարտական գործողություններ կատարելու եւ հարձակում գործելու պարագայում ինքնակամ թողել եւ նահանջել են մարտական դիրքից, թույլ են տվել հակառակորդ Ադրբեջանի ԶՈՒ անարգել մուտք գործել մարտական դիրք, որն անցել է վերահսկողության տակ:

Գործը ուղարկվել է դատարան:

ԳՈՂԻՆ ՀԱՅՏԱԲԵՐԵԼ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հարություն Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի հունվարի 3-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, գտնվելով Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցում, նկատել է նույն փողոցի 226-րդ հասցեի տունը (բնակարանը) եւ հաստատապես համոզվելով, որ տանը (բնակարանում) մարդ չկա՝ ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու՝ գողություն կատարելու նպատակով, օգտվելով տանը (բնակարանում) մարդ չլինելու հանգամանքից, բարձրացել է նշված տան բակ տանող դարպասների վրա, ցատկել է բակ, այնտեղից վերցրել մետաղյա առարկաներ՝ շամփուր եւ ամրան, դրանց միջոցով ֆիզիկական ուժի գործադրմամբ ներգործել է տան (բնակարանի) մետաղապլաստե պատուհանի վրա, բացել այն եւ ապօրինի մուտք գործել Ռ.Կաժոյանի բնակարան, որտեղ հափշտակություն կատարելու նպատակով ննջասենյակի կահույքի վրա դրված զարդատուփից վերցրել է Ռ. Կաժոյանին պատկանող 3 հատ շղթա ու մեկ հատ կախազարդ, սակայն հափշտակությունն իր կամքից անկախ հանգամանքներով չի հասցրել ավարտին, քանի որ միացել է տան անվտանգության ազդանշանային համակարգը, դեպքի վայր են ժամանել Ոստիկանության ծառայողներ, որոնք վերջինիս հայտաբերել են տան ննջասենյակի պահարանում եւ ձերբակալել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 53 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

Ո՞Վ Է ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ

Երեկ հայտնի դարձավ, որ ՀՀ նախկին փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը նշանակվել է վարչապետի խորհրդական: Այս նշանակումն ուշագրավ է մի քանի հանգամանքներով:

Նախ վերջինս ազատվեց փոխվարչապետի պաշտոնից ՔՊ վարչության կեղծված ընտրություններից հետո, երբ պարզ էր դարձել, որ նրա ձայներն ավելին են, քան պետք է լինեին իրականում, եւ արդյունքում Մաթեւոսյանը չդարձավ ՔՊ վարչության անդամ: Բացի այդ, Նիկոլ Փաշինյանը դժգոհ էր Համբարձում Մաթեւոսյանի աշխատանքից՝ նաեւ Բրյուսովի անվան համալսարանի շուրջ ստեղծված իրավիճակով պայմանավորված, քանի որ հենց վերջինս էր հանդիսանում հոգաբարձուների խորհրդի նախագահ: Հիմա, փաստորեն, որոշել են, որ Համբարձում Մաթեւոսյանը կարող է լավ խորհուրդներ տալ վարչապետին:

Մեկ այլ հետաքրքիր դրվագ Մաթեւոսյանի մասով. մասնավորապես, փետրվարի 5-ին ձերբակալվել էին Գյումրու ավագանու ՔՊ-ական անդամ Աղասի Մաթեւոսյանն ու նրա շրջապատից եւս երեք անձ: «Առավոտ» թերթը գրել էր, որ նրանք կասկածվում են ռուս զբոսաշրջիկներին կողոպուտի ենթարկելու համար: Ընդգծենք՝ Գյումրու ավագանու ՔՊ-ական անդամ Աղասի Մաթեւոսյանը նախկին փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի ազգականն է՝ հոր հորեղբոր որդին:

ԼՐԱԳՐՈՂԻՑ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Երեկ Շիրակի նախկին մարզպետ Նազելի Բաղդասարյանը նշանակվեց վարչապետի օգնական:

Լրագրողից՝ պատգամավոր, ապա մարզպետ դարձած Նազելի Բաղդասարյանը հրաժարվել էր իր պաշտոնից, առանց հանրային լուրջ հիմնավորման: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նա ցանկանում է աշխատել գործադիրում. մարզպետի աթոռը, կարծես թե, փորձադաշտ էր տիկնոջ համար, ու նա էլ «հավես չունի» շարունակելու պաշտոնավարել: Ի վերջո, մարզպետը հեռացավ, առանց պատասխանատվության զգացումի մարզի բնակիչների հանդեպ:

Հիմա պատասխանատվության այդպիսի զգացում ունեցող Նազելի Բաղդասարյանը նշանակվում է վարչապետի օգնական: Ի վերջո, գործադիրում աշխատելու նրա երազանքը կատարվեց. այլ հարց է, թե նա որքան «հավես կունենա» աշխատել՝ արդեն որպես վարչապետի օգնական:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վարդենիսի բաժնից հաղորդում է ստացվել Վարդենիս քաղաքում գտնվող «Նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում մի շարք չարաշահումների կատարման մասին:

Մասնավորապես, հիվանդներին ամբողջությամբ չեն տրամադրվում օրվա հասանելիք ծխախոտը եւ սնունդը, օրվա ճաշացանկից մատուցվում է միայն առանց մսի ապուր եւ հաց, բաժանմունքի սանիտարների, ճաշարանի աշխատակիցների պարտականությունը հանդիսացող աշխատանքների մի մասը կատարում են հիվանդները, առանձին հիվանդներ էլ ՊՈԱԿ-ի տնօրենին կամ նրա ընտանիքին պատկանող անասնագոմում շարունակաբար կատարում են մաքրման աշխատանք, ըստ հաղորդման՝ նաեւ տուն-ինտերնատում ենթարկվում են խոշտանգման:

Բացի հիվանդներին առնչվող դեպքերից, հաղորդման տվյալներով, տնօրենը գլխավոր ավագ քրոջ միջոցով ՊՈԱԿ-ի մի խումբ աշխատակիցներից պահանջել եւ ստացել է գումար, որպեսզի բարձրացնի դրույքաչափերը, հաշմանդամության համար աշխատանքից ազատված անձին տնօրենը, գումար վերցնելով, ընդունել է աշխատանքի որպես հսկիչ, իսկ հոգեբուժարանում որպես ատամնաբույժ է աշխատում նաեւ Վարդենիս քաղաքի մի բնակիչ, որը երբեւէ որեւէ հիվանդի ատամ չի հեռացրել կամ բուժել, չունի ատամնաբույժների համար նախատեսված համապատասխան արտոնագիր, սակայն տնօրենը նրան աշխատանքից չի հեռացրել, եւ մինչ օրս վերջինս աշխատում է նշված վայրում ու ստանում աշխատավարձ:

Հաղորդման հիման վրա՝ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով, 435-րդ հոդվածի 1-ին մասով (7 դրվագով), 436-րդ հոդվածի 1-ին մասով (7 դրվագով) եւ 450-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի քննչական վարչության քննիչների, Ոստիկանության ծառայողների համագործակցությամբ անմիջապես ձեռնարկվել են անհետաձգելի քննչական, վարութային, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ հանգամանքները պարզելու նպատակով:

Մասնավորապես, նույն օրը «Վարդենիսի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի հիվանդասենյակներում, այլ տարածքներում կատարվել են զննություններ: Դրանց ընթացքում հենց տեղում պարզվել է, որ տուն-ինտերնատի բնակիչներից մեկի անկողինը՝ ներքնակը, գցված է հատակին՝ ջեռուցման մարտկոցների դիմաց, իսկ հիվանդի որովայնին ամրացված է եղել կտորից գոտի, որից ամրացված է եղել մետաղական շղթա՝ միացված ջեռուցման մարտկոցներին: Բացի այդ, տուն-ինտերնատի բնակիչներից մեկի ձեռքերն ու ոտքերը մեջքի վրա պառկած դիրքում կտորով կապված են եղել անկողնու չորս անկյուններց:

Բաժանմունքներից մեկի ճաշասենյակում արձանագրվել է, թե ինչ տեսակի սնունդ է մատակարարվել բնակիչներին: Նույն օրը կայացված որոշումներով ՊՈԱԿ-ից առգրավվել են սննդի եւ ծխախոտի հատկացման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները:

Հանցագործության կատարման մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիման վրա ձերբակալվել եւ վարույթն իրականացնող մարմին են ներկայացվել ՊՈԱԿ-ի տնօրենը, հոգեբույժը, բաժանմունքներից մեկի հերթապահ խնամող-սանիտարն ու հերթապահ բուժքույրը:

Քննությամբ նախնական տվյալներ են ստացվել այն մասին, որ տուն-ինտերնատի բնակիչների նկատմամբ նշված գործողությունները կատարվել են հոգեբույժի հանձնարարությամբ, ինչի մասին տեղյակ է եղել նաեւ տնօրենը:

Նախաքննությունը շարունակվում է: Դեպքի մի շարք հանգամանքներ եւ գործի համար նշանակություն ունեցող տվյալներ պարզելու, Վարդենիսի «Նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում հանցավոր հնարավոր այլ դրսեւորումներ ի հայտ բերելու նպատակով ՆԳՆ ոստիկանության Վարդենիսի բաժնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու հանձնարարություն:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԻՆՉ ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Ներքին գործերի նախարարության պարեկային ծառայության պետ Արթուր Ումրշատյանին ազատման պատճառը միայն Հանրապետության հրապարակում տեղի ունեցած միջադեպը չէ:

Ներքին գործերի նախարարության պարեկային ծառայության պետ Արթուր Ումրշատյանին ազատել են եւ բացատրել են ազատման հիմքը, որ պարեկային ծառայությունը առհասարակ կազմակերպված չի աշխատում, եւ դեռ ավելին՝ վերջինիս հայտնել են, որ տարբեր ողբերգական դեպքեր են եղել, բայց նա մեկ անգամ չի գնացել դեպքի վայր՝ հասկանալու համար, թե իր ծառայողները ինչ քայլեր են արել, ուստի լավ կլինի՝ նա լքի այդ պաշտոնը:

Նշենք, որ Արթուր Ումրշատյանը ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության պետ էր նշանակվել 2021 թվականի հուլիսի 7-ին: Ումրշատյանը 2018-2019 թթ. եղել է ՀՀ ոստիկանության զորքերի հասարակական կարգի պահպանության գնդի (թիվ 1032 զորամաս) հրամանատարի 1-ին տեղակալ-շտաբի պետ, 2019-2021 թթ. ՀՀ ոստիկանության զորքերի հասարակական կարգի պահպանության գնդի (թիվ 1032 զորամաս) հրամանատար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-Ի ՀԵՏ

«Յունիբանկ»-ը եւ «Մատենա» միջազգային բիզնես դպրոցը դարձան գործընկերներ: Համագործակցության շրջանակներում «Յունիբանկ»-ը տրամադրում է կրթաթոշակներ կրթության, գիտության, մշակույթի եւ առողջապահության ոլորտի մասնագետներին՝ «Թիմերի եւ մարդկանց առաջնորդում» եւ «Ռազմավարական պլանավորում եւ բիզնեսի զարգացում» ուսումնական ծրագրերին մասնակցելու համար:

«Մատենա» բիզնես դպրոցի ծրագրերը նախատեսված են միջին եւ բարձր օղակների ղեկավարների համար, որոնք ձգտում են բարձրացնել իրենց մասնագիտական եւ առաջնորդային հմտությունները: Դպրոցն օգտագործում է առաջատար միջազգային բուհերի եւ տեղական փորձագետների փորձն ու լավագույն պրակտիկան: Կրթաթոշակի տրամադրման որոշումը կայացնում է «Մատենայի» եւ «Յունիբանկ»-ի համատեղ հանձնաժողովը՝ մոտիվացիոն նամակի եւ դիմորդի հետ հարցազրույցի հիման վրա:

Կրթական ծրագրերին աջակցությունը «Յունիբանկ»-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության կարեւոր ուղղությունն է: Բիզնես դպրոցի հետ համագործակցությունը դարձել է այս ուղղությամբ բանկի աշխատանքի տրամաբանական շարունակությունը: «Յունիբանկ»-ի ծրագրերն ուղղված են որակյալ կրթության մատչելիության բարձրացմանը: Բանկի աջակցությամբ Հայաստանի ու Արցախի սահմանամերձ շրջաններում բացվել են ժամանակակից համակարգչային դասարաններ եւ ինժեներական լաբորատորիաներ: 2021 թ. բանկն ու Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը ստորագրեցին հուշագիր կրթական ծրագրերի կատարելագործման եւ բիզնեսի մակարդակում դրանց կիրառման մասին: «Յունիբանկ»-ի ֆինանսական աջակցությամբ համալսարանում բացվել է թվային բանկային լաբորատորիա:

«Յունիբանկ»-ը նաեւ «Համահայկական ինտելեկտուալ շարժում» նախաձեռնության մշտական գործընկերն է, որի հիմնական նպատակն է ինտելեկտուալ ժամանցի մասսայականացումը:

ԱՀԱՋԱՆԳ

Քիչ առաջ ArmLur.am-ին ահազանգ է հնչեցվել, որ երեկ երեկոյան Արարատի մարզի զորամասերից մեկի տարածքում խոշոր հրդեհ է եղել: Հրամանատարական կազմը խառնվել է իրար, փորձել են ամեն ինչ անել եւ մարել հրդեհը: Հրդեհը մարվել է ուշ երեկոյան:

ArmLur.am-ը դիմեց Պաշտպանության նախարարություն՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվել տվյալ զորամասում: Ի պատասխան մեր հարցադմանը՝ ՊՆ մամուլի խոսնակ Արամ Թորոսյանը հայտնեց, որ զորամասին կից տարածքում մի քանի հնամաշ անվադողեր են այրվել, որն անմիջապես մարվել է:

ՀԱՍՏԱՏԵԼ ԵՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ

ՀՀ կառավարությունը հաստատել է հանրակրթական ուսումնական հաստատության եւ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական եւ վարչատնտեսական աշխատողների դատարկությունների անվանացանկն ու դրանց նկարագիրը՝ համապատասխանեցնելով կրթության զարգացման միտումներին համահունչ մասնագետների դատարկության նկարագրին:



ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնում են, որ որոշումը տարածվում է հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող բոլոր այն ուսումնական հաստատությունների վրա, որոնք անցում են կատարում «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված կառավարման նոր համակարգին:

Ընթացիկ իրավիճակ եւ նոր կարգավորումների անհրաժեշտություն

Մանկավարժների՝ ոչ միայն մասնագիտական պատրաստվածությամբ, այլեւ գործառույթների հստակ սահմանմամբ է պայմանավորված, թե ինչպիսի կարողունակություններով պիտի օժտված լինի անձը կրթության կազմակերպման արդյունքում կարողունակ քաղաքացիներ ձեւավորելու համար: Գործող կարգով սահմանված են մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը եւ նկարագիրը, որոնցում առկա մի շարք գործառույթներ առհասարակ չեն կիրառվում կամ իրագործելի են մասնակի դեպքերում փոքրաթիվ դպրոցների աշխատակիցների կողմից: Հաստատության տնօրենի պաշտոնի նկարագիրը գործող կարգում ներառում է նաեւ վարչատնտեսական մասի գործառույթներ, ինչն առանձնացվել է օրենքի նոր փոփոխության արդյունքում, եւ, բնականաբար, անհրաժեշտություն է առաջացել վերանայել ու հստակեցնել տնօրենի լիազորությունների շրջանակը:

Տնօրեն

«Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ նոր կարգավորումներով հստակեցվել են տնօրենին ներկայացվող պահանջները իր պարտականություններն առավել ամբողջական եւ համապարփակ իրականացնելու համար: Այն կարող է հանդիսանալ նաեւ իբրեւ ուղեցույց դպրոցի զարգացման ծրագիր մշակելու համար, որի առանցքային ուղղվածությունը հաստատության բաց եւ թափանցիկ կառավարումն է, ինչպես նաեւ կրթության որակի շեշտադրումը: Կրթության արդյունավետ կազմակերպման համար կարեւոր է տնօրենի համագործակցային աշխատանքը վարչատնտեսական համակարգողի հետ՝ համատեղ նախատեսված գործընթացի կազմակերպման առումով:

Տնօրենի իրավասությունների շրջանակը, որը սահմանված է պաշտոնի նկարագրում, ներառում է կրթական ողջ գործընթացը՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ընտրության, մանկավարժական հաստիքների համալրման, կանոնադրական պարտավորությունների կատարման, ներքին կարգապահական կանոնների սահմանման գործառույթից մինչեւ կրթության որակի ապահովում: Վերոգրյալ փոփոխությունների տրամաբանական շարունակությունն է տնօրենի տեղակալի գործառույթների նկարագրի վերանայումը:

Ուսուցիչ

Հանրակրթության ոլորտի փոփոխությունների կարեւորագույն բաղադրիչ են ուսուցչին ներկայացվող պահանջները՝ներառելով հանրակրթության նոր չափորոշչի պահանջներին համապատասխան կրթության վերջնարդյունքների ապահովման վերաբերյալ պատասխանատվության շրջանակ, սովորողների կարողունակությունների զարգացման համար անհրաժեշտ մասնագիտական եւ որակավորման չափանիշներ: Կարեւոր բաղադրիչ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ ԱՈՒՊ-ի կազմումը եւ վարումը, դրանց հիման վրա կրթության կազմակերպումը: Հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտի փոփոխությամբ պայմանավորված՝ մանկավարժական աշխատողներին ներկայացվող ընդհանրական պահանջ է իրազեկվածությունը օրենսդրական ոլորտի փոփոխություններին:

Ուսուցչին ներկայացվող պահանջ է նաեւ ծանոթությունը դասավանդման ժամանակակից մեթոդներին եւ նորագույն կրթական տեխնոլոգիաներին: Ուսուցիչները մասնագիտական գործունեություն իրականացնելիս կկատարեն վերլուծություններ, կկիրառեն նորարարություններ, կիրականացնեն ուսումնական նախագծեր, կյուրացնեն դասավանդման նոր մեթոդների առանձնահատկությունները եւ կուսումնասիրեն գործընկերների առաջավոր փորձը:

Մանկավարժական աշխատողների կարողունակություններում էական նշանակություն է տրվել Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում աշխատանքների իրականացմանը, համակցված/հեռավար ուսուցման կազմակերպման գործընթացի կարգավորումներին՝ ըստ պատասխանատվության աստիճանի: Էլեկտրոնային կառավարման եւ դասավանդման ապահովման մասնագետի պաշտոնի նկարագիրը սահմանվում է առաջին անգամ, որով ներկայացվում է աշխատողի կարեւոր դերակատարումը ուսման գործընթացի պատշաճ կազմակերպման առումով:

Կառավարության որոշմամբ սահմանվել են նաեւ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական եւ վարչական աշխատողների պաշտոնների նկարագրերը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՆՈՐ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

«Յունիբանկ»-ը ներկայացնում է փոքր եւ միջին բիզնեսի համար նախատեսված նոր վարկ, որը տրամադրվում է եվրոյով՝ 5% եւ 6% տարեկան տոկոսադրույքներով: Վարկը ժամկետը կազմում է մինչեւ 5 տարի:

Վարկի առաջին 12 ամիսներին տոկոսադրույքը կազմում է ընդամենը 5%, իսկ 13-60-րդ ամիսներին՝6% տարեկան: Վարկը կարող է տրվել ինչպես կարճաժամկետ՝ 1 տարով, այնպես էլ երկարաժամկետ՝ մինչեւ 5 տարի ժամկետով: Վարկը նախատեսված է բիզնեսի արդյունավետությունը զարգացնելու եւ բարձրացնելու, ինչպես նաեւ այլ բանկերում ունեցած վարկերի վերաֆինանսավորման համար: Իրավաբանական անձինք եւ անհատ ձեռներեցները կարող են վարկը ձեւակերպել «Յունիբանկ»-ի 55 մասնաճյուղերից մեկում: Վարկառուին ներկայացվող պահանջները նվազագույնն են. բիզնեսի առնվազն 12 ամսվա գործունեություն եւ բացասական վարկային պատմության բացակայություն:

Վարկի եւս մեկ կարեւոր առավելությունը, բացի ցածր տոկոսադրույքից, մինչեւ 12 ամիս արտոնյալ ժամկետ տրամադրելու հնարավորությունն է, որի ընթացքում վարկառուն վճարում է միայն տոկոսագումարը:

«Կապիտալ ներդրումների, շրջանառու միջոցների համալրման եւ ընթացիկ ծախսերի համար փոքր եւ միջին բիզնեսին անհրաժեշտ են երկարաժամկետ մատչելի ռեսուրսներ: Մեր վարկային ծրագրերը ձեռներեցներին հնարավորություն են տալիս լուծել այդ խնդիրներն առանց ավելորդ քաշքշուկի՝ արագ որոշում կայացնելով եւ հնարավորինս ցածր տոկոսադրույքներով ֆինանսավորում տրամադրելով»,- ասում է «Յունիբանկ»-ի կորպորատիվ բիզնեսի զարգացման եւ վաճառքների տնօրեն Դավիթ Պետրոսյանը:

2022 թվականին «Յունիբանկ»-ի կողմից տրամադրված բիզնես վարկերի ծավալը, նախորդ տարվա համեմատ, աճել է ավելի քան 18%-ով, ինչը վկայում է ձեռներեցների կողմից բանկի վարկատեսակների նկատմամբ պահանջարկի մեծացման մասին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐ

ԳՐՔԱՌԱՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ

Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին, Հայաստանում նշվում է Գիրք նվիրելու օրը: Տոնի շրջանակում ընթերցասերները հնարավորություն են ունենում մասնակցելու գրքին նվիրված փառատոնների, շնորհանդեսների, տոնավաճառների, հանդիպելու իրենց սիրած հեղինակներին ու նոր գրքերով հարստացնելու եւ՝ սեփական, եւ՝ մտերիմների գրադարանները:

Հայաստանի գրողների միությունը տոնը կանցկացնի միության «Պոեզիայի պուրակ»-ում: Փետրվարի 19-ին՝ ժամը 13:00-ին, Հայաստանի գրողների միության շենքի դիմաց եւ «Պոեզիայի պուրակ»-ում գրողները կհանդիպեն ընթերցողների, անցորդների հետ եւ կնվիրեն գրքեր:

«Նոր գիրք» գրախանութի դիմաց կլինի գրասեղան, որտեղ եւս կլինեն նվեր գրքեր:

Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում փետրվարի 19-ին՝ ժամը 11:00-16:00-ն, իրականացվելու է «Մուտքը՝ գրքով» ակցիան:

Այդ օրը բոլոր այցելուները կարող են տոմսի փոխարեն թանգարան մուտք գործել գրքով: Թանգարանը բարեգործական ակցիայի շրջանակում հավաքված գրքերին կավելացնի թանգարանի հրատարակություններից եւս եւ ամբողջը կնվիրաբերի մանուկների խնամքով զբաղվող կենտրոններից մեկին:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում կմեկնարկի ամենամյա Մանկապատանեկան գրքի 19-րդ երեւանյան ցուցահանդես-տոնավաճառը, որի շրջանակում հրատարակիչները կներկայացնեն իրենց մանկապատանեկան լավագույն գրքերը, որոնք այդ օրերին կվաճառվեն 20-40 տոկոս զեղչով:

Ցուցահանդես-տոնավաճառը կանցկացվի փետրվարի 17-19-ը՝ ժամը 10:00-17:00-ն:

Եռօրյա ծրագրի շրջանակում նախատեսվում են գրքի շնորհանդեսներ, հեքիաթապատումներ, թատերական եւ տիկնիկային ներկայացումներ, մանկագիրների ու նկարազարդողների հետ հանդիպումներ, ցուցահանդեսներ, մուլտֆիլմերի դիտում, վարպետության դասեր, տարվա լավագույն ընթերցողների պարգեւատրում եւ այլ հետաքրքիր միջոցառումներ:

«Դարան» գրախանութում էլ փետրվարի 17-19-ը կանցկացվի «Արքոյական զեղչեր» նախաձեռնությունը: Ինչպես իրենք են նշում. «Զեղչարարներ շատ կգան ու կանցնեն անհետ, Արքոյական զեղչը մեր կմնա հավետ»:

Այդ օրերին գրախանութից հնարավոր կլինի գրքեր ձեռք բերել 20-80 տոկոս զեղչով:

Տոնի առթիվ **«Նյումեգ»** հրատարակչությունը փետրվարի 18-ին կանցկացնի Գրքի ձմեռային փառատոնը: Արդեն 2-րդ տարին «Կոնգրես» հյուրանոցում հրատարակչությունը գրքատոն է նվիրում ընթերցասերներին: Փառատոնն ունի 3 հիմնական լոկացիա, որոնցից յուրաքանչյուրում ընթանալու են գրական տարբեր միջոցառումներ: Փառատոնի հիմնական նպատակն է խոսել գրականության մասին, անմիջական շփում ունենալ հայ հեղինակների հետ, ներկայացնել նոր բեսթսելերներ: «Նյումեգ»-ի բոլոր գրքերը փառատոնին կվաճառվեն մինչեւ 40 տոկոս զեղչով:

«Բուկինիստ» գրախանութներում փետրվարի 16-18-ը Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ կաշխատեն աստղային խորհրդատուները:

Փետրվարի 16

16:00-17:00 - Նարեկ Մարգարյան (Մաշտոց 20)

17:00-18:00 - Մերի Ներսիսյան (Մաշտոց 20)

18:00-19:00 - Ռաֆայել Երանոսյան (Մաշտոց 20)

Փետրվարի 17

15:00-16:00 - Եգոր Գլումով (Մաշտոց 20)

16:00-17:00 - Հայկ Մկրտչյան (Մետրոնոմ)

17:00-18:00 - Սերգեյ Սարգսյան (Մետրոնոմ)

18:00-19:00 - Կարո Բալյան (Մաշտոց 20)

18:00-19:00 - Բաբկեն Չոբանյան (Մետրոնոմ)

15:00-16:00 - Լիաննա (@bookiinny) (Մետրոնոմ)

16:00-17:00 - Աննա Ավանեսյան (Մաշտոց 20)

Փետրվարի 18

16:00-17:00 - Աելիտա Չիլինգարյան (Մաշտոց 20)

17:00-18:00 - Սուրեն Առուստամյան (Մաշտոց 20)

18:00-19:00 - Աշոտ Աղաբաբյան (Մաշտոց 20)

Եվ, իհարկե, գործելու է 20 տոկոս զեղչ աստղային խորհրդատուներից գնված գրքերի համար:

ՀՈԼԻՎՈՒԴ

ԲՐՅՈՒՍ ՈՒԻԼԻՍԻ ՄՈՏ ԴԵՄԵՆՑԻԱ Է ԱԽՏՈՐՈՇՎԵԼ

Հոլիվուդյան աստղահանդեսային դերասան Բրյուս Ուիլիսի մոտ ճակատագրական հիվանդությունն է ախտորոշվել. այս մասին հայտնել է նրա ընտանիքը: Հայտարարության մեջ նշվում է, որ «թեեւ սա ցավալի է, սակայն հստակ ախտորոշումը թեթեւացնում է»:

«Այսօր այս հիվանդությունը բուժում չունի, բայց մենք հուսով ենք, որ այս իրողությունը կարող է փոխվել առաջիկա տարիներին», - ասվում է հայտարարության մեջ:

Նշվում է, որ 67-ամյա Ուիլիսի մոտ անցյալ տարվա գարնանը ախտորոշվել է աֆազիա, որը խոսքի դժվարություններ է առաջացնում, սակայն հիվանդությունը զարգացել է, եւ այժմ նրան ավելի հստակ ախտորոշում են տվել:

Ընտանիքը նաեւ երախտագիտություն է հայտնել դերասանի երկրպագուների ցուցաբերած աջակցության համար:

Ուիլիսի ընտանիքը, այդ թվում՝ նրա կին Էմմա Հեմինգ Ուիլիսը, նախկին կին Դեմի Մուրը եւ նրա հինգ դուստրերը նրա հիվանդության մասին հայտնել էին դեռ անցյալ տարի: Այդ ժամանակ նրանք հայտնել էին, որ Ուիլիսի մոտ առկա հիվանդությունն ազդում է նրա ճանաչողական ունակությունների վրա, եւ նա կդադարեցնի դերասանական կարիերան:

Բրյուս Ուիլիսը հայտնի է դարձել 1980-ականներին եւ 90-ականներին՝ նկարահանվելով «Պինդ ընկույզ» (Die hard), «Վեցերորդ զգայարան», «Արմագեդոն», «Հինգերորդ տարրը» եւ այլ ֆիլմերում: Դերասանը նկարահանվել է շուրջ հինգ տասնյակ ֆիլմերում:

ԼՈՒՐԵՐ

3 ՆՈՐԵԿ՝ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Ինչպես հայտնում է «Արարատ» ակումբի մամուլի ծառայությունը, թիմին է միացել սերբ պաշտպան Դուշան Միյիչը: 29-ամյա ֆուտբոլիստն առաջին քայլերն արել է սերբական «Նովի Սադ» ակումբում, որտեղ խաղացել է 2010-2014 թվականներին: Այնուհետեւ տարբեր տարիներին խաղացել է «Բաչկա», «Հայդուկ», «Տրայալ», «Սլոգա Կրալյեվո» թիմերում: Նա ելույթ է ունեցել Բոսնիա եւ Հերցեգովինան ներկայացնող «Կրուպա» ակումբում: Միյիչի վերջին ակումբը «Մլադոստն» է, որը խաղում է Սերբիայի Սուպերլիգայում: Այս մրցաշրջանում նա մասնակցել է առաջնության 9 հանդիպման, իսկ Սերբիայի Գավաթի խաղարկությունում դաշտ է դուրս եկել 2 անգամ:

«Արարատ»-ում կարիերան կշարունակի նաեւ երիտասարդ կիսապաշտպան Կասիմ Հաջին: 22-ամյա խաղացողը «Արարատ» տեղափոխվել է Շվեյցարական «Ստադ Նիոն» ակումբից: Շվեյցարական ակումբի կազմում մասնակցել է 40-ից ավելի խաղերի, դարձել 7 գոլի հեղինակ: Կասիմ Հաջին Ֆրանսիայի եւ Կոմորյան կղզիների քաղաքացի է:

Բուլղարացի եզրային հարձակվող Գեորգի Բաբալիեւը եւս համալրել է «Արարատ»-ի շարքերը: Պրոֆեսիոնալ կարիերայի ընթացքում խաղացել է բուլղարական «Վիտոշա», «Սոզոպոլ», Սոֆիայի «Լոկո» ակումբներում: 21-ամյա ֆուտբոլիստի վերջին ակումբը Վարնայի «Սպարտակ»-ն է: Բուլղարիայի Բարձրագույն լիգայում այս մրցաշրջանում Բաբալիեւն անցկացրել է 10 հանդիպում ու դարձել մեկ գոլի հեղինակ:

Բաբալիեւը նաեւ Բուլղարիայի տարբեր տարիքային հավաքականներում խաղալու փորձ ունի: Հանդես է եկել Բուլղարիայի Մ16 տարեկանների հավաքականում, իսկ մինչեւ 18 տարեկանների թիմում անցկացրել է երկու խաղ:

ՍԿՍԵԼ Է ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը հաջող է մեկնարկել WR Chess Masters մրցաշարում:

Գերմանական Դյուսելդորֆ քաղաքում մեկնարկած մրցաշարի առաջին տուրում Արոնյանը սպիտակ խաղաքարերով մրցեց հնդիկ Պրագնանդդհի հետ: Պարտիայի 50-րդ քայլին Արոնյանը ստիպեց մրցակցին անձնատուր լինել:

Մրցաշարի երկրորդ տուրում Արոնյանի մրցակիցը Վինսենտ Կեյմերն է:

WR Chess Masters մրցաշարին մասնակցում են 10 գրոսմայստերներ: Այն կեզրափակվի փետրվարի 25-ին:

● *Փետրվարի 19-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Ուշ լինի, նուշ լինի» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հարեւանս հարբեցող է եւ պարբերաբար ծեծի է ենթարկում իր անչափահաս երեխային, հաճախ նրան տանը մենակ է թողնում, չի խնամում. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Լուսինե Ումուտյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անհրաժեշտ է երեխաների իրավունքների ցանկացած խախտման դեպքում այդ մասին անմիջապես ահազանգել նաեւ համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողով՝ պահանջելով իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ բացառելու համար նմանատիպ վերաբերմունքը երեխաների նկատմամբ: Խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովների ղեկավարները ի պաշտոնե համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարներն են:

Ավելին, յուրաքանչյուր համայնք եւ վարչական շրջան ունի իր կազմում ստեղծված խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողով, որը օրենքով լիազորված է իրականացնել երեխաների պաշտպանություն: Մասնավորապես, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովները իրականացնում են երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ծնողական իրավունքները սահմանափակելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների եւ շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաեւ ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում: Խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովները կատարում են նաեւ համայնքում երեխաների իրավունքների եւ շահերի պաշտպանության վիճակի մշտադիտարկում եւ համայնքում բնակվող այնպիսի ընտանիքների հայտնաբերում, որոնցում առկա է երեխայի իրավունքների կամ շահերի խախտման վտանգ:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկ է արձանագրել, որ, ի պաշտպանություն երեխաների իրավունքների, ՀՀ-ում ընդունվել են մի շարք իրավական նորմեր, որոնցով սահմանված են հստակ կարգավորումներ: Մասնավորապես, նման իրավիճակում առաջնահերթ անհրաժեշտ է ահազանգել ոստիկանություն՝ 1-02 հեռախոսահամարով, քանի որ երեխայի նկատմամբ բռնություն կիրառելը, ծնողական պարտականությունները դիտավորյալ չկատարելը իրենց մեջ պարունակում են հանրորեն վտանգավոր արարքներ, որոնց համար սահմանված է թե՛ քրեական եւ թե՛ վարչական պատասխանատվություն:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ուզում եմ՝ ծառայող եղբայրս ներկա լինի հարսանիքիս: Ո՞ւմ դեմ է դիմել:

Մելանյա Կարապետյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկ է արձանագրել, որ յուրաքանչյուր զինծառայող իրավունք ունի ներկա գտնվելու իր ընտանիքի անդամների հետ կապված այնպիսի կարեւոր իրադարձություններին, ինչպիսին է, օրինակ, հարսանիքը: Անհրաժեշտ է հարսանիքից առնվազն մեկ ամիս առաջ ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղից Ձեր եղբայրը զորակոչվել է Զինված ուժեր: Ներկայանալով զինվորական կոմիսարիատ՝ Դուք պետք է ներկայացնեք դիմում եւ, դիմումին կից, անհրաժեշտ այն փաստաթղթերը, որոնք հավաստում են, որ զինծառայողը համարվում է Ձեր ընտանիքի անդամը, եւ Դուք ամուսնանում եք կոնկրետ ամսաթվի:

ՀՀ պաշտպանության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերը զինկոմիսարիատ ներկայացնելուց հետո համապատասխան հաղորդագրություն կուղարկվի այն զորամաս, որտեղ ծառայում է Ձեր եղբայրը, որից հետո Ձեր հարսանեկան արարողության ամսաթվին կտրամադրեն լրացուցիչ արձակուրդ՝ 3-5 օր ժամկետով: Ընդ որում, զինծառայողին արձակուրդը կտրամադրեն Ձեր հասանիքին նախորդող օրը, որ նա կարողանա հասցնել նախապատրաստվել հարսանեկան արարողությանը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կնկարահանվի կենսագրական ֆիլմ Շառլ Ազնավուրի մասին, որը վերնագրված է «Միայե Ազնավուր». կնկարահանեն պոետ-ռեժիսոր Մեհդի Իդիրը եւ Grand Corps Malade-ն, իսկ պրոդյուսերներն են Kallouche Cinema եւ Mandarin & Compagnie ընկերությունները: Թահար Ռահիմը, որը «Մարգարեն» եւ «Մավրիտանացին» ֆիլմերում գլխավոր դերերի համար ստացել է BAFTA եւ «Ոսկե գլոբուս» անվանակարգեր, կմարմնավորի ֆրանսիացի շանսոնյե Շառլ Ազնավուրին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: